ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.12.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/246

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ Հայկ Ակարմազյան Սահակի (պետական գրանցման վկայական՝ 282.1131251),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.11.2020թ. թիվ 26/26-1/17149-2020 գրությամբ Հայկ Ակարմազյան Սահակի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը Երևանի քաղաքապետարանի 11.11.2020թ. թիվ 01/61-22357 գրության հիման վրա 19.11.2020թ. թիվ 26/26-1/17149-2020 գրությամբ նախաձեռնել է Հայկ Ակարմազյան Սահակի Ա/Ձ-ին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Հայկ Ակարմազյան Սահակի Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Հայկ Ակարմազյան Սահակի Ա/Ձ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան ս/թ. նոյեմբերի 23-ին, ինձ որպես անհատ ձեռնարկատեր գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՀՀ ֆինանսների նախարարության նախաձեռնված ընթացակարգի մասին էլեկտրոնային փոստով ուղարկված գրության, ներկայացնում եմ իմ գրավոր դիրքորոշումը.

առաջին հերթին թույլ տվեք տեղեկացնել, որ քաղաքապետարանի ԵՔ-ԳՀԾՁԲ-20/261 գնման ընթացակարգին նախորդել է նույն ծառայության համար ԵՔ-ԳՀԾՁԲ-20/255-ը, որին մասնակցելու համար տառ առ տառ նույնությամբ ներկայացրել եմ նույն հայտը: Զարմանալիորեն գնահատող հանձնաժողովը ոչ մի անհամապատասխանություն ԵՔ-ԳՀԾՁԲ-20/255 ծածկագրով ընթացակարգում չի գտել: Ավելին՝ այդ օրերին մասնակցել եմ նաև ԵՔ-ԳՀԾՁԲ-20/258 ծածկագրով ընթացակարգին, կրկին չեմ լրացրել իրական շահառուների մասին տեղեկատվություն, կրկին հայտը ընդունվել է և ոչ մի անհամապատասխանություն կրկին չի արձանագրվել: ՈՒստի Ձեր ուշադրությունը հրավիրելով այս փաստի վրա, հարկ եմ համարում նշել, որ հիմք կա կարծելու, որ ԵՔ-ԳՀԾՁԲ-20/261 ծածկագրով ընթացակարգի դեպքում կամ կայացվել է սուբյեկտիվ որոշում կամ էլ ԵՔ-ԳՀԾՁԲ-20/255 և ԵՔ-ԳՀԾՁԲ-20/258 ընթացակարգերը իրականացվել են խախտումներով:

Հեռախոսով խոսել եմ քաղաքապետարանի ներկայացուցչի հետ, նշել եմ, որ չլրացնելը պայմանավորված է նրանով, որ կարծել եմ, որ որպես ԱՁ պարզ է, որ շահառուն մեկն է և ես եմ:

Ինչ վերաբերում է անհամապատասխանությունը չշտկելուն, կարող եմ ասել, որ ինձ էլ. փոստով նամակն ուղարկվել է նոյեմբերի 5-ին, աշխատանքային օրվա ավարտին, իսկ հանձնաժողովը շտկելու համար 1 աշխատանքային օր է տվել նոյեմբերի 4-ին, այսինքն ծանուցվել եմ 1 օր ուշ, ուստի 45 րոպե ժամանակ եմ ունեցել, ինչը գործնականում անհնարին է դարձրել շտկելը: Խախտվել է նաև հրավերի 8.1 կետը և հայտերի բացման օրը՝ նոյեմբերի 4-ին հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով էլեկտրոնային փոստիս հայտի բացման արձանագրությունը չի ուղարկել: Իսկ 8.9 կետի համաձայն հանձնաժողովի քարտուղարը նիստի նույն օրը համակարգի միջոցով պետք է

տեղեկացներ՝ առաջարկելով շտկել անհամապատասխանությունը, սակայն ծանուցումն ուղարկվել է նոյեմբերի 6-ին, 2 օր ուշ, այսինքն շտկմանը հատկացված ժամկետից 1 օր ուշ: Արդյունքում, խախտվել են գնման ընթացակարգի պահանջները, չեն պահպանվել ժամկետները, ինչը ցավոք ոչ միայն հանգեցրել է նման խառնաշփոթի, այլև ըստ էության Եվրոպական միության կողմից իրականացվող նման կարևոր ծրագրի մրցույթն իրականացվել է խախտումներով:

Ինքս հանդիսանում եմ օրինապահ ձեռնարկատեր և քաղաքացի, ցավում եմ, որ հանձնաժողովի վերոնշյալ թերացումները հանգեցրել են նման իրավիճակի: Հույս եմ հայտնում, որ իմ դիրքորոշումը հաշվի կառնվի և կկայացվի արդարացի որոշում»:

Հայկ Ակարմազյան Սահակի Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/246 ընթացակարգի շրջանակներում 30.11.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել իր մասնակցությունը և հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.11.2020թ. թիվ 01/61-22357 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված ԵՔ-ԳՀԾՁԲ-20/261 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտ է ներկայացրել Հայկ Ակարմազյան Սահակի Ա/Ձ-ն:

Գնահատող հանձնաժողովը, Հայկ Ակարմազյան Սահակի Ա/Ձ-ի հայտը գնահատելիս արձանագրել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, այն է՝ ներկայացված հայտի N 1 հավելվածում լրացված չէ իրական շահառուների մասին տեղեկատվությունը:

Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով, առաջարկել է մասնակցին մինչև ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը, սակայն վերջինիս կողմից այն չի շտկվել:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ Հայկ Ակարմազյան Սահակի Ա/Ձ-ն խախտել է հրավերով ստանձնած պարտավորությունը՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով, որոշել է մերժել մասնակցի հայտը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն առաջարկել է ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով՝ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/246 ընթացակարգի շրջանակներում 30.11.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/246 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/246 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է ԵՔ-ԳՀԾՁԲ-20/261 ծածկագրով ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Հայկ Ակարմազյան Սահակի Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.11.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Հայկ Ակարմազյան Սահակի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի N 1 հավելվածում /Դիմում հայտարարություն/ լրացված չէ իրական շահառուների մասին տեղեկատվությունը և որոշվել է Կարգի 41-րդ կետի համաձայն՝ առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրում շտկել անհամապատասխանությունը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 05.11.2020թ. արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ ծանուցել է՝ նիստի թիվ 2 արձանագրությունը Մասնակցի akarmazyan@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով, նույն արձանագրությունը 06.11.2020թ. ուղարկել է նաև Armeps էլեկտրոնային գնումների համակարգի (հետայսու նաև Համակարգ) միջոցով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.11.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Կարգի 42-րդ կետի համաձայն մերժել է

Մասնակցի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից չի շտկվել N 2 արձանագրությունում նշված անհամապատասխանությունը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.11.2020թ. թիվ 26/26-1/17149-2020 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 11.11.2020թ. թիվ 01/61-22357 գրությունը, Հայկ Ակարմազյան Սահակի Ա/Ձ-ի՝ գործով առկա դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի թ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը, ներառյալ՝ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը ***<u>նույն օրը</u>*** դրա մասին ***<u>էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը</u>***: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ

պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես՝ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է ԵՔ-ԳՀԾՁԲ-20/261 ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Հայկ Ակարմազյան Սահակի Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.11.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Հայկ Ակարմազյան Սահակի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի N 1 հավելվածում /Դիմում հայտարարություն/ լրացված չէ իրական շահառուների մասին տեղեկատվությունը և որոշվել է Կարգի 41-րդ կետի համաձայն՝ առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 05.11.2020թ. արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ ծանուցել է՝ նիստի թիվ 2 արձանագրությունը Մասնակցի akarmazyan@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով, նույն արձանագրությունը 06.11.2020թ. ուղարկել է նաև Համակարգի միջոցով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.11.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Կարգի 42-րդ կետի համաձայն մերժել է Մասնակցի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից չի շտկվել N 2 արձանագրությունում նշված անհամապատասխանությունը:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված

տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Վերոգրյալ նորմի բովանդակությունից հետևում է, որ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարի համար սահմանված է էլեկտրոնային փոստի միջոցով նույն օրը դրա մասին մասնակցին էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցելու պարտավորություն:

Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները չպահպանելու դեպքում դրանք չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ,

որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով՝ գործով առկա փաստական հանգամանքները համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Կարգի 41-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը, այն է՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.11.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Հայկ Ակարմազյան Սահակի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի N 1 հավելվածում /Դիմում հայտարարություն/ լրացված չէ իրական շահառուների մասին տեղեկատվությունը, մինչդեռ արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ Մասնակիցը Կարգի 41-րդ կետի համաձայն նույն օրը՝ 04.11.2020թ., ծանուցվելու փոխարեն ծանուցվել է 05.11.2020թ., այն է՝ հաջորդ օրը, ինչպես նաև՝ 06.11.2020թ., որպիսի պայմաններում խախտվում է նաև իրավական որոշակիության սկզբունքը:

Նման պայմաններում գտնում եմ, որ ոչ իրավաչափ ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Մասնակցի, ուստիև հնարավոր չէ արձանագրել Հայկ Ակարմազյան Սահակի Ա/Ձ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.11.2020թ. թիվ 26/26-1/17149-2020 գրությամբ Հայկ Ակարմազյան Սահակի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**